Սերգեյ Մարաբյան
ՀՀ դատական դեպարտամենտի
կազմակերպական վարչության պետ

Հանցագործությունների կրկնակիության հարաբերակցությունը համակցության և ռեցիդիվի հետ (օրենսդրական կարգավորումների, դատական պրակտիկայի և զարգացման միտումների մասին իրավական վերլուծություն)

Դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ մի անձը կատարում է երկու և ավելի հանցանքներ, մասնավորապես՝ կրկնում է միևնույն հանցագործությունը, կա՛մ միաժամանակ կատարում է տարբեր հանցագործություններ, կա՛մ մեկ արարքով կատարում է մի քանի ինքնուրույն հանցակազմ պարունակող հանցագործություններ, կա՛մ անձի կողմից հանցագործություն է կատարվում այն ժամանակ, երբ նախորդ կատարածի համար դատվածությունը դեռևս մարված կամ հանված չէ: Ինչևէ, նման դեպքերը կարող են բազմազան լինել, սակայն կարևորն այն է, որ դրանք ստանան համապատասխան քրեաիրավական գնահատական՝ կապված դրանց որակման և պատիժ նշանակելու առանձնահատկությունների հետ:

Միևնույն անձի կողմից երկու և ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող հանցագործությունների կատարմանը համապատասխան քրեաիրավական գնահատական տալու հիմնահարցը բազմիցս եղել է իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում, այդ մասին գրվել են մենագրություններ[1], գիտական հոդվածներ[2] և այլն, սակայն մինչ օրս այդ հարցերը չեն կարող համարվել լուծված:

Մինչև 2003 թվականի նոր քրեական օրենսգրքի ընդունումը ՀՀ-ում գործող 1961 թվականի քրեական օրենսգրքում միևնույն անձի կողմից երկու և ավելի հանցագործությունների կատարման դեպքերին քրեաիրավական գնահատական տալու հարցն ըստ էության կարգավորված չէր, ընդհանուր մասում ընդամենը տրվում էր առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունը (հոդված 23.1), իսկ հատուկ մասի մի շարք հանցակազմերում ամրագրված էր կրկնակիությունը՝ որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, սակայն առանց բացահայտելու, թե ինչ պետք է հասկանալ կրկնակիության տակ: Համակցության մասին նշվում էր միայն պատժի ինստիտուտը կանոնակարգող հոդվածներում, մասնավորապես՝ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածում, որում համակցությունը ներկայացվում էր որպես միևնույն անձի կողմից կատարված երկու և ավելի հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոն:

Ինչևէ, ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի՝ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը միևնույն անձի կողմից երկու և ավելի հանցագործությունների կատարման դեպքերին քրեաիրավական գնահատական տալու հարցում առաջընթաց գրանցեց, քանի որ ընդհանուր մասում առանձին հոդվածներով սահմանվեցին հանցագործությունների կրկնակիության, համակցության և ռեցիդիվի հասկացությունները և հիմնական հատկանիշները: Ընդ որում, օրենքը հրաժարվեց «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» հասկացությունից, որը, ինչպես իրավացիորեն նշվում է տեսության մեջ, հանդիսանում էր անձին խարազանող պիտակ[3], ավելին, այն հաշվի էր առնվում արարքը որակելիս, իսկ գործող օրենքում տրվում է ռեցիդիվի՝ որպես

---

[1] Տե՛ս Ìàëêîâ Â.Ï. Ìíîæåñòâåííîñòü ïðåñòóïëåíèé è åå ôîðìû ïî ñîâåòñêîìó óãîëîâíîìó ïðàâó Êàçàíü, 1982. Ìàëêîâ Â.Ï., Òèìåðøèí Õ.À. Ìíîæåñòæåííîñòü ïðåñòóïëåíèé. Óôà, 1995. և այլն:

[2] Տե՛ս Ëþäìèëà Èíîãàìîâà-Õåãàé, Íåîäíîêðàòíîñòü è êîíêóðåíöèÿ íîðì: íåêîòîðûå ñïîðíûå âîïðîñû êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé è íàçíà÷åíèÿ íàêàçàíèÿ //Óãîëîâíîå ïðàâî, 2/2002, ñ.32., Âîëæåíêèí Á. Ïðèöèï ñïàâåäëèâîñòè è ïðîáëåìû ìíîæåñòâåííîñòè ïðåñòóïëåíèé ïî ÓÊ ÐÔ// Çàêîíîñòü N12, ñ.5., ×åðíåíêî Òàìàðà Ôîðìû ìíîæåñòâåííîñòè ïðåñòóïëåíèé è èõ îòðàæåíèå â êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé //Óãîëîâíîå ïðàâî 4/2000, ñ.42-43. և այլն:

[3] Տե՛ս Միքայել Գրիգորյան. Հանցագործության ուսմունքը քրեական իրավունքում, 2001 էջ 306:

երևույթի հասկացությունը, հատկանիշները և միաժամանակ սահմանվում, որ այն համարվում է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք (քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)։ Համակցությունը, ի տարբերություն նախկինի, ներկայացվեց ոչ միայն պատիժ նշանակելու կանոն, այլև արարքի որակման կանոն։

Թվում էր, թե քրեական օրենսգրքում տալով հանցագործությունների ռեցիդիվի, համակցության և կրկնակիության բնորոշումները և հիմնական հատկանիշները՝ դրանով իսկ վերջ կդրվեն միևնույն անձի կողմից երկու և ավելի հանցագործությունների կատարման դեպքերին քրեաիրավական գնահատական տալու և պատիժ նշանակելու հետ կապված տեսական վեճերին և պրակտիկ հիմնախնդիրներին, սակայն պետք է փաստել, որ քրեական օրենսգրքի գործողության հնգամյա փորձը ցույց տվեց, որ դրանով ոչ միայն չլուծվեցին նախկին տարաձայնությունները, այլև առաջացան նորերը[4]։

Ինչպես երևում է ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված հանցագործությունների համակցության, կրկնակիության և ռեցիդիվի ինստիտուտները կանոնակարգող նորմերի վերլուծությունից, ի տարբերություն կրկնակիության, որի դեպքում կարևոր չէ, թե նախկինում կատարած հանցագործության համար անձը դատապարտված եղել է, թե՝ ոչ, կարևորը քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելն է, ռեցիդիվի դեպքում պարտադիր է նախկինում կատարած հանացագործության համար դատվածություն ունենալը, ընդ որում՝ դատվածությունը պետք է լինի դիտավորյալ հանցագործության համար, և նոր կատարած հանցանքն էլ պետք է լինի դիտավորյալ, իսկ համակցության դեպքում պարտադիր է, որ կատարած հանցագործությունների համար անձը դատապարտված չլինի։ Այսինքն՝ հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը իրարից սահմանազատելու դեպքում օրենքը հստակ չափանիշ է տալիս, այն է՝ դատվածությունը, իսկ հիշյալ ինստիտուտները կրկնակիությունից սահմանազատելու դեպքում չափանիշը հստակ չէ, քանի որ կրկնակիությունը կարող է լինել ինչպես դատավածության հետ կապված, այնպես էլ դատվածության հետ չկապված, կրկնակիություն կարող են առաջացնել ինչպես միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված հանցագործությունները, այնպես էլ տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործություններ՝ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված լինելու պարագայում։

Ասվածից հետևում է, որ կրկնակիությունը համակցությունից և ռեցիդիվից սահմանազատելու հարցում օրենսդիրը անհետևողականություն է դրսևորել և «կրկնակիությանը», բացի իր նեղ

---

[4]ՀՀ քրեական օրենսգրքի 2003թվականի խմբագրությամբ՝ հատուկ մասի հափշտակությունները սահմանող 175-179-րդ և 182-րդ հոդվածներում որպես հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ իրար հաջորդականությամբ սահմանված էին՝ «կրկին անգամ» և «*նախկինում սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի կողմից*» հատկանիշները: Այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածում նշվում էր, որ *«Սույն գլխով նախատեսված դեպքերում հափշտակությունը համարվում է կրկին անգամ կատարված, եթե դա կատարվել է նախկինում սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի կողմից»:* Ստացվում էր, որ միևնույն հոդվածի միևնույն մասում որպես որակյալ հատկանիշ երկու անգամ իրար հաջորդականությամբ սահմանված էր կրկնակիությունը: Ինչը, սակայն, օրենսդրական հետագա փոփոխությունների արդյունքում ուղղվեց՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-179-րդ և 182-րդ հոդվածներից «*նախկինում սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի կողմից*» հատկանիշը բացառվեց ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների կառուցվածքից, որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ և թողնվեց միայն «կրկին անգամ» հատկանիշը: Սակայն պետք է նկատել, որ թեև հոդվածից բացառվեց *«նախկինում օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի կողմից»* հատկանիշը, սակայն՝ թողնվեց «սույն *օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից»* հատկանիշը, որն հիշյալ հոդվածներում սահմանված է որպես առավել ծանրացնող հանգամանք /այս հարցին հետագա քննարկումներում դեռ կանդրադառնանք/:

հատկանիշներից, օժտել է նաև այնպիսի հատկանիշներով, որոնցով օժտված են նաև համակցությունը և ռեցիդիվը։

Ինչպես գիտենք, հանցագործությունների կրկնակիությունը, համակցությունը և ռեցիդիվը համարվում են հանցագործությունների բազմակիության տեսակները, այսինքն՝ ընդհանուր երևույթի ինքնուրույն մասերը։ Իսկ ընդհանուրը մասերի բաժանելու տրամաբանությունն այն է, որ այն ընդհանուր հատկանիշներից զատ, որոնք բնութագրական են ընդհանուրի յուրաքանչյուր մասին որպես ընդհանուրի մաս, յուրաքանչյուր մաս իր հերթին պետք է ունենա իր առանձնահատուկ հատկանիշները, որոնք բնութագրական են կոնկրետ տվյալ մասին, և որոնց շնորհիվ ընդհանուրի մեջ մտնող մասերը տարանջատվում են միմյանցից։ Ուստի, ընդհանուրը մասերի բաժանելը, ըստ էության, պետք է հետապնդի մեկ նպատակ՝ ցույց տալ, որ ընդհանուրն ունենալով ընդհանուր հատկանիշներ, այնուամենայնիվ, նրա մասերը օժտված են ինքնուրույն առանձին հատկանիշներով, որակներով, որոնք արտահայտում են ընդհանուրը կազմող մասերի էական տարբերությունները։ Մինչդեռ, ինչպես նշեցինք վերևում, այս տրամաբանությունը ՀՀ քրեական օրենսգրքում չի պահպանվել, ինչն էլ հաճախ դժվարություններ է առաջացնում միևնույն անձի կողմից երկու և ավելի հանցագործությունների կատարման դեպքերին քրեաիրավական գնահատական տալու և արդարացի պատիժ նշանակելու հարցերում։

1. Ռեցիդիվի և կրկնակիության հարաբերակցության մասին։

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանցագործությունների կրկնակիություն է համարվում սույն օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը։ Իսկ ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ կրկնակիությունը բացակայում է, եթե նախկինում կատարած հանցանքի համար անձը քրեական պատասխանատվությունից ազատվել է օրենքով սահմանված հիմքերով, կամ այդ հանցանքի համար դատվածությունը մարվել է կամ հանվել։ Այսինքն՝ կրկնակիությունը լինում է ինչպես դատվածության հետ չկապված, այնպես էլ դատվածության հետ կապված։

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարած հանցանքի համար։

Ստացվում է, որ նախկինում կատարած հանցանքի համար դատվածություն ունեցող անձի կողմից միաբնույթ և օրենքով նախատեսված դեպքերում նաև միասեռ հանցագործությունների կրկին կատարելը, ըստ քրեական օրենսդրության, համարվում է և՛ կրկնակիություն, և՛ ռեցիդիվ։

Ասվածը առավել վառ արտահայտված է հատկապես հափշտակությունների հանցակազմերը սահմանող հոդվածներում։

Այսպես, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը պատասխանատվություն է սահմանում քրեական օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից կրկին գողություն կատարելու համար։

Հարց է ծագում. նախկինում երկու անգամ դատվածություն ունեցող անձի կողմից կրկին գողություն կատարելը պետք է գնահատվի որպես ռեցիդիվ, թե կրկնակիություն։

Եթե ելնենք ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի տրամաբանությունից, ապա բերված օրինակում առկա է ռեցիդիվ, քանի որ ըստ հիշյալ հոդվածի 2-րդ մասի՝ դատվածությունը հաշվի է առնվում բացառապես պատիժ նշանակելիս և ռեցիդիվը գնահատելիս։ Այսինքն՝ դատվածությունը կրկնակիության հատկանիշ չի կարող համարվել։ Մինչդեռ, քանի որ քրեական օրենսգրքի տրամաբանությունից հետևում է, որ անտեսվել է քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը և դատվածությունը սահմանվել է նաև որպես կրկնակիության հատկանիշ, ուստի ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը կարող է գնահատվել նաև որպես կրկնակիություն, ինչը և հաճախ հանդիպում է պրակտիկայում[5]։ Ասվածը կարող էր էական նշանակություն չունենալ, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի չորրորդ

---

[5] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արմեն Սամվելի Պապիկյանի գործով 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը։

մասում նախատեսված չլիներ, որ մինչև 18 տարին լրանալն անձի կողմից կատարված հանցանքի համար դատվածությունը ռեցիդիվը գնահատելիս հաշվի չի առնվում: Բանն այն է, որ եթե անձը մինչև 18 տարին լրանալը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում թվարկված հանցանքների կատարման համար երկու անգամ դատվածություն ունենալու դեպքում կրկին կատարում է թվարկված հանցանքներից որևէ մեկը, ապա ստացվում է, որ ռեցիդիվ չի կարող լինել, ուստի նրա կատարածը որակվում է ըստ փաստացի կատարվածի՝ առանց որևէ որակյալ հատկանիշի: Հետևաբար, եթե քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի դրույթը ներկայացվի որպես ռեցիդիվ, ապա կստացվի, որ այն անձը, ով մինչև 18 տարին լրանալը հիշյալ հոդվածում թվարկված հանցանքների համար դատվածություն ունենալու դեպքում կրկին կատարում է գողություն, ապա նրա արարքը չի կարող որակվել 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Իսկ քանի որ կրկնակիության դեպքում կարևոր չէ, թե անձը հանցանքներից մեկը կատարել է մինչև 18 տարին լրանալը, թե դրանից հետո, ուստի արարքը կարող է որակվել 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, որպես կրկին անգամ կատարված:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքում բարձրացրած այն հարցին, որ «/…/ նախաքննության մարմնի և դատարանի կողմից Արմեն Պապիկյանի արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական չի տրվել, անտեսվել է ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, ըստ որի՝ այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի 18 տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում: Հետևաբար, Արմեն Պապիկյանի արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, այլ նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով /…/» նշում է. «…ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներում ամրագրված իրավանորմերը ՀՀ քրեական օրենսգրքի ամբողջական համակարգում մեկնաբանելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը հանցագործությունների կրկնակիության և հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտներից յուրաքանչյուրին հաղորդել է ինքնուրույն քրեաիրավական իմաստ:

Այսպես՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ հանցանքը կատարելու ռեցիդիվը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված հանցակազմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների ռեցիդիվն ինքնին չի հանդիսանում որևէ հանցակազմ որակյալ դարձնող հանգամանք: Մինչդեռ հանցագործությունների կրկնակիությունը հանդիսանում է բազմաթիվ հանցակազմեր, այդ թվում՝ գողության հանցակազմը /ՀՀ քր. օր-ի 177-րդ հոդված/ ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանք:

Հետևաբար՝ հանցագործությունների ռեցիդիվի կանոններն անհրաժեշտ է կիրառել պատիժն անհատականացնելիս, իսկ հանցագործությունների կրկնակիության կանոնները՝ արարքը որակելիս…»: Ասվածը հիմնավորելու համար վճռաբեկ դատարանը համեմատական է անցկացնում նաև 1961 թվականի և 2003 թվականի քրեական օրենսգրքերի միջև, մասնավորապես նշելով, որ «1961 թվականի քրեական օրենսգրքում սահմանված չէր «Հանցագործության ռեցիդիվ» հասկացությունը, իսկ այժմ գործող 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած սկզբունքային նորամուծություններից մեկն այն է, որ օրենսդիրը հրաժարվել է «ռեցիդիվիստ» և «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» հասկացություններից՝ հանցագործությունների որակման համար կարևորելով ոչ թե հանցանք կատարած անձը, այլ նրա արարքը…»[6]:

Ճիշտ է, օրենսդիրը հրաժարվեց անձին բնութագրող հանգամանքից, սակայն դրա փոխարեն նախատեսեց երևույթ, որը թեև ձևական առումով անձի հետ որևէ կապ չունի, քանի որ, ի տարբերություն նախկինի, ներկայումս նշվում է «հանցագործությունների ռեցիդիվ» հասկացությունը, ինչը ենթադրում է, որ խոսքը ոչ թե անձի մասին է, այլ ինստիտուտի, այնուամենայնիվ, բովանդակությամբ ըստ էության որևէ բան չի փոխվել նախկին և գործող օրենսգրքերի միջև՝ երկու դեպքում էլ խոսքը դատվածություն ունեցող անձի կողմից կրկին

---

[6] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արմեն Սամվելի Պապիկյանի գործով 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը:

հանցանք կատարելու մասին է: Հետևաբար, համեմատական անցկացնելով՝ իր դիրքորոշումը հիմնավորելու վճռաբեկ դատարանի փորձը կարելի է համարել չհաջողված:

Ինչևէ, համաձայնելով վճռաբեկ դատարանի այն դիրքորոշման հետ, որ ռեցիդիվի կանոնները պետք է կիրառվեն պատիժ նշանակելիս[7], իսկ կրկնակիության կանոնները արարքը որակելիս, միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ գործող օրենսդրությամբ դա միանշանակ չի կարող ընկալվել: Խնդիրն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում խոսվում է ոչ թե կրկնակիության և ռեցիդիվի մասին, այլ հանցանքը կատարելու պահին նախկինում հոդվածում թվարկված հանցանքների համար երկու և ավելի անգամ ***դատվածություն*** ունենալու մասին, որը կարող է մեկնաբանվել և՛ որպես կրկնակիություն, և՛ որպես ռեցիդիվ:

Նկատենք, որ այս հարցի առնչությամբ միասնականություն չկա նաև տեսության մեջ:

Լյուդմիլա Ինոգամովա-Խեգայը նշում է՝ եթե հոդվածում որպես հանցակազմի հատկանիշ նշվում է դատվածությունը, ապա այստեղ առկա է կրկնակիություն: Հեղինակն իր կարծիքը հիմնավորում է այն հանգամանքով, որ ՌԴ քրեական օրենսգրքում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս նախատեսված խստացնող պարտադիր կանոնները *(խոսքը մասնավորապես ՌԴ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն պահանջի մասին է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժի չափը չի կարող պակաս լինել հոդվածի սանկցիայում նախատեսված առավել խիստ պատժի սանկցիայի վերին սահմանի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երկու երրորդից ոչ պակաս, իսկ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ ոչ պակաս երրորդ քառորդից),* որոնք, սակայն, ըստ նրա՝ չեն կիրառվում այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածում դատվածությունն է նշվում՝ որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ[8]:

Միքայել Գրիգորյանի կարծիքով, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի առանձին հոդվածներում ռեցիդիվը հանդես է գալիս որպես տվյալ արարքը որակյալ /ծանրացնող/ դարձնող հանգամանք, և որպես օրինակ հեղինակը նշում է հատկապես հափշտակությունների հանցակազմերը[9]:

Կարծում ենք՝ ինչպես Լյուդմիլա Ինոգամովա-Խեգայի, այնպես էլ Միքայել Գրիգորյանի տեսակետները խոցելի են:

Լյուդմիլա Ինոգամովա-Խեգայը, նշելով, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս օրենքում նախատեսված են խստացնող պարտադիր կանոններ, որոնք, սակայն չեն կիրառվում այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածում դատվածությունն է նշվում՝ որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, ուստի հոդվածում դատվածության մասին նշումը վկայում է կրկնակիության մասին հաշվի չի առնում այն, որ այդ նույն ՌԴ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ դատվածությունը հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և ռեցիդիվը գնահատելիս, ուստի ստացվում է, որ հատուկ մասում դատվածության հատկանիշի մասին նշումը կարելի է մեկնաբանել նաև որպես ռեցիդիվ: Իսկ ինչ վերաբերում է Մ.Գրիգորյանի տեսակետին, ապա կարևոր է նկատել,

---

[7] Նկատենք, որ ռեցիդիվը պատիժ նշանակելիս հաշվի առնելու մասին նշվում էր դեռևս Ցարական Ռուսաստանի քրեական օրենսդրությունում //Ï.È.Ëþáëèíñêèé. Òåõíèêà, òîêêîâàíèå è êàçóèñòèêà óãîëîâíîãî êîäåêñà., Ì., 2004. էջ 45.// և ներկայիս մի շարք արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ: Ավելին, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի քրեական օրենսդրությունը հնարավորություն է տալիս, ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս դուրս գալ կատարված հանցագործության համար պատասխանատվություն սահմանող հոդվածի սանկցիայի վերին սահմանից և առավել խիստ պատիժ նշանակել, անգամ երկու անգամ ավելի խիստ: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ եթե անձը՝ լինելով դատապարտված և դատվածությունը դեռևս չմարած, կրկին կատարում է հանցանք, ապա անիմաստ է խոսել նրա ուղղվելու մասին, ուստի միակ նպատակը պոտենցիալ վտանգը հասարակությունից մեկուսացնելն է // տե՛ս À.À. Ìàëèíîâñêèé Ñðàâíèòåëüíî ïðàâîâåäåíèå â ñôåðå óãîëîâíîãî ïðàâà. Ì., 2002. ñ.233-234.//:

[8] Տե՛ս Ëþäìèëà Èíîãàìîâà-Õåãàé, Íåîäíîêðàòíîñòü è êîíêóðåíöèÿ íîðì: íåêîòîðûå ñïîðíûå âîïðîñû êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé è íàçíà÷åíèÿ íàêàçàíèÿ //Óãîëîâíîå ïðàâî, 2/2002, ñ.32.

[9] Տե՛ս Մ.Գրիգորյան Հանցագործությունների կրկնակիությունը, ռեցիդիվը և համակցությունը // Դատական իշխանություն, 15-16/80-81, Մարտ-Ապրիլ, էջ,37:

որ եթե ռեցիդիվը հատուկ մասում ստանձնում է որպես հանցակազմի որակյալ դարձնող հատկանիշի դեր, ապա հարց է ծագում՝ ***ինչու է, միայն որոշ հանցագործությունների դեպքում, մասնավորապես՝ հափշտակությունների դեպքում ռեցիդիվը համարվում հանցակազմի հատկանիշ, ընդ որում որակյալ դարձնող հատկանիշ, իսկ մյուս հանցակազմերի դեպքում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, ինչ է հափշտակությունները առավել վտանգավոր են, քան այլ հանցագործությունները:*** Բացի այդ, եթե հատուկ մասում դատվածության մասին նշումը պետք է հասկանալ որպես ռեցիդիվ, ապա մեկ այլ հարց է ծագում՝ ***ինչով էր պայմանավորված այն հանգամանքը, որ նոր ընդունված քրեական օրենսգրքում օրենսդիրը հրաժարվեց նախկին քրեական օրենսգրքում ամրագրված «ռեցիդիվիստ» և «առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ» հասկացություններից, որոնք համարվում էին ինչպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, այնպես էլ հանցագործությունների որակման կանոն, և ռեցիդիվը որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք ներկայացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Արդյոք դա չի նշանակում, որ օրենսդիրը հրաժարվել է ռեցիդիվը որպես հանցագործությունների որակման կանոն դիտելու գաղափարից:***

Ինչևէ, պետք է փաստել, որ ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում դժվար է միանշանակ ասել, թե օրենսդիրը ինչ է նկատի ունեցել քրեական օրենսգրքի Հատուկ մասում դատվածությունը նշելով որպես համապատասխան հանցակազմերը որակյալ դարձնող հատկանիշ՝ կրկնակկիություն, թե ռեցիդիվ: Ուստի, ըստ այդմ, կարելի է տարբեր փաստարկներ և հակափաստարկներ բերել հիմնավորելու համար, որ եթե քրեական օրենսգրքի հատուկ մասում ***դատվածությունն*** է նշվում որպես հանցակազմի հատկանիշ, ուրեմն խոսքը կրկնակկիության մասին է, ոչ թե ռեցիդիվի, կամ հակառակը, սակայն մեր քննարկման խնդրո առարկան այն չէ, թե քրեական օրենսգրքի հատուկ մասում դատվածության մասին նշումը պետք է մեկնաբանել որպես ռեցիդիվ կամ կրկնակկիություն, այլ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա է ***իրավական անորոշություն***, որը պետք է լուծել ոչ թե դատական պրակտիկայի կամ տեսական մեկնաբանությունների միջոցով, այլ օրենսդրական փոփոխությունների ճանապարհով:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ ՄԻԵԴ-ը ***Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության*** գործով նշել է. «1.*իրավունքը պետք է լինի միևնույն չափով մատչելի. քաղաքացիները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմ է կիրառվելու, 2.նորմը չի կարող համարվել օրենք, եթե այն ձևակերպված չէ բավարար **ճշգրտությամբ**, որը թույլ կտա քաղաքացիներին դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը..*[10]:

Փաստորեն, ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում ստացվում է, որ անձը կատարում է հանցագործություն, սակայն հնարավորություն չունի կանխորոշելու, թե ինչ իրավական նորմ է կիրառվելու, ինչը տեղի էր ունեցել Արմեն Պապիկյանի գործով[11]:

Հետևաբար, որպեսզի ապահովվի իրավական որոշակիության սկզբունքը և վերջ դրվի կրկնակկիության և ռեցիդիվի ինստիտուտների բախման և ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի միջև առկա հակասությանը, կարծում ենք՝ անհրաժեշտ է որպեսզի «դատվածությունը», ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացվի բացառապես հանցագործությունների ռեցիդիվի հատկանիշ և ամենակարևորը, որպեսզի բացառվի հակասական և իրարամերժ մեկնաբանությունները, նհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներից դատվածության հատկանիշը բացառել[12]:

---

[10] Տե՛ս ՄԻԵԴ-ի Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1979թ. վճիռը, para. 49.

[11] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արմեն Սամվելի Պապիկյանի գործով 2007 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը:

[12] Թամարա Չերնենկոն, չհամաձայնելով Բ. Վոլժենկինի այն կարծիքին, որ անհրաժեշտ է հրաժարվել հատուկ մասում ամրագրված դատվածության հատկանիշից, քանի որ այն հակասում է արդարության սկզբունքին // Âîëæåíêèí Á. Ïðèíöèï ñïðàâåäëèâîñòè è ïðîáëåìû ìíîæåñòâåííîñòè ïðåñòóïëåíèé ï î ÓÊ ÐÔ// Çàêîííîñòü N12, ñ.5.// նշում է. «Դատվածության մասին նշումը վկայում է ռեցիդիվի մասին, իսկ քանի որ ռեցիդիվային հանցավորությունը առավել վտանգավոր հանցավորության

Քրեական օրենսգրքի Հատուկ մասից դատվածության հատկանիշի բացառման դեպքում կրկնակիության և ռեցիդիվի տարանջատման չափանիշը կլինի հստակ՝ կա դատվածություն, ուրեմն առկա է ռեցիդիվ, չկա դատվածություն, ուրեմն կրկնակիություն՝ ինչպես ռեցիդիվի և համակցության դեպքում[13]: Այսինքն՝ եթե անձը նախկինում կատարած հանցանքի համար ունի դատվածություն և կրկին կատարում է միևնույն հանցանքը, ապա նրա արարքը որակվում է ըստ փաստացի կատարվածի, իսկ դատվածություն ունենալու հանգամանքը հաշվի առնելով որպես ռեցիդիվ՝ նրա նկատմամբ խիստ պատիժ է նշանակվում:

տարատեսակ է, հետևաբար այն անձինք, ում կատարած հանցանքը առաջացնում է ռեցիդիվ,առավել վտանգավոր հանցագործների տեսակ են, որոնք տարբերվում են վառ արտահայտված կայուն հակահասարակական ուղղվածությամբ» //Տե՛ս ×åðíåíêî Òàìàðà Ôîðìû ìíîæåñòâåííîñòè ïðåñòóïëåíèé è èõ îòðàæåíèå â êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé //Óãîëîâíîå ïðàâî 4/2000, ñ.42-43.//: Համաձայնելով, որ ռեցիդիվային հանցավորությունը և այն կատարող անձինք դասվում են առավել վտանգավորների շարքին, սակայն ցանկանում ենք վերապահում անել այն հարցերում, որ նախ՝ դատվածության մասին նշումը չի վկայում ռեցիդիվի մասին, այն նույն հաջողությամբ կարող է մեկնաբանվել նաև որպես կրկնակիություն /ինչի մասին արդեն նշեցինք/, երկրորդ՝ Բ. Վոլժենկինը չի առաջարկում հրաժարվել ռեցիդիվից, այլ առաջարկում է հրաժարվել հատուկ մասում դատվածության հատկանիշից, որն, ինչպես նշեցինք, մի շարք խնդիրներ է առաջացնում:

[13]Նկատենք, որ բազմակիությունը տեսակների բաժանելու հիմքում դատվածության հատկանիշը դնելու հանգամանքը հիմնավորում է նաև Տ.Չերնենկոն //տե՛ս ×åðíåíêî Òàìàðà Ôîðìû ìíîæåñòâåííîñòè ïðåñòóïëåíèé è èõ îòðàæåíèå â êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé //Óãîëîâíîå ïðàâî 4/2000, ñ.42-43.//:

2. Կրկնակիության և համակցության հարաբերակցության մասին.

Թեև մեր առաջարկած լուծման տարբերակի դեպքում կլուծվեն կրկնակիության և ռեցիդիվի սահմանազատման և արժևորման հիմնախնդիրները, սակայն այդուհանդերձ մի շարք հարցեր կմնան չլուծված: Խնդիրն այն է, որ իրավակիրառ պրակտիկայում հայտնի խնդիրներ և դժվարություններ են առաջանում նաև հանցագործությունների կրկնակիության և համակցության ինստիտուտների սահմանազատման և արժևորման և կատարված արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու և պատիժ նշանակելու հարցերում:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հանցագործությունների կրկնակիությունն առկա է նաև այն դեպքում, երբ անձը կատարում է տարբեր հոդվածներով նախատեսված հանցանքներ, սակայն պայմանով, որ այդ մասին նշված լինի հատուկ մասում: Իսկ քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածից հետևում է, որ եթե անձը կատարել է տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցանքներ, ապա դա համարվում է հանցագործությունների համակցություն, ուստի ստացվում է, որ կրկնակիությունը և համակցությունը համընկնող, հատվող հասկացություններ են: Հետևաբար հարց է ծագում՝ ***ինչպես պետք է որակել այն արարքները, որոնք միաժամանակ առաջացնում են և՛ համակցություն, և՛ կրկնակիություն:***

Եթե ելնենք ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ և 21-րդ հոդվածների համեմատական վերլուծությունից, ապա այն դեպքում, երբ անձի կատարած արարքներում առկա է միաժամանակ և՛ համակցություն, և՛ կրկնակիություն, ապա կատարվածը պետք է որակվի երկու հոդվածով՝ առաջինն ինքուրույն, իսկ երկրորդն ինչպես համակցության, այնպես էլ կրկնակիության կանոնով: Օրինակ, եթե անձը կատարում է զգալի չափերի գողություն, իսկ հետո խարդախություն, ապա գողությունը որակվում է ըստ փաստացի կատարվածի, իսկ խարդախությունը միաժամանակ և՛ համակցության կանոնով, և՛ կրկնակիության հատկանիշով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ:

Եթե տարբեր հոդվածներով նախատեսված կրկնակիություն առաջացնող հանցագործությունները համակցությամբ որակելը խնդիրներ չեն առաջացնում, ապա նույնը չի կարելի ասել միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների դեպքում:

Այսպես, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003 թվականի դեկտեմբերի18-ի դատավճռով՝

1. Վալերի Վարազդատի Զաքարյանը մեղավոր է ճանաչվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Թամարա Հակոբի Մեղրակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

3. Լևոն Մարտիրոսի Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

4. Ոսկան Գառնիկի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Դատապարտյալներին հիշյալ հոդվածներով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ՝

«Նախկինում հափշտակությունների համար դատապարտված և պատիժները լրիվ չկրած Վալերի Զաքարյանը, Ոսկան Հարությունյանը և ամուսիններ Լևոն Աբրահամյանն ու Թամարա Մեղրակյանը, նախապես համաձայնության գալով միմյանց հետ, Երևանի Դավիթաշեն համայնքի Զոր-1 թաղամասի՝ Արամ Ղարիբյանին պատկանող թիվ 62 հողատարածքը կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու միջոցով ներկայացրել են որպես Թ.Մեղրակյանի

սեփականություն, որը 2002թ. նոյեմբերի 29-ին խաբեությամբ վաճառելով Արա Առաքելյանին՝ խարդախությամբ հափշտակել են 3.000 ԱՄՆ դոլար:/.../

Վ.Զաքարյանը, Ռ.Հարությունյանը և ամուսիններ Լ.Աբրահամյանն ու Թ.Մեդրակյանը, նախապես համաձայնության գալով միմյանց հետ, Երևանի Լալայանց փողոցի թիվ 47ա շենքի՝ Միքայել Հայրապետյանին պատկանող թիվ 39 բնակարանը կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու միջոցով ներկայացրել են որպես Թ.Մեդրակյանի և Լ.Աբրահամյանի համատեղ սեփականություն, որը 2002թ. դեկտեմբերի 29-ին խաբեությամբ վաճառելով Պետրոս Տեր-Պետրոսյանին, խարդախությամբ հափշտակել են նրանից 8.000 ԱՄՆ դոլար:/.../

Վալերի Զաքարյանը, Ռսկան Հարությունյանը և ամուսիններ Լ.Աբրահամյանն ու Թ.Մեդրակյանը, նախապես համաձայնության գալով միմյանց հետ, Երևանի Դավիթաշեն համայնքի Զոր-1 թաղամասի՝ Արթուր Աբգարյանին և Լորետա Ղարիբջանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող թիվ 86 հողատարածքն ու Ֆլորա Յայլյանին, Շավարշ և Նորայր Մարությունեերին բաժնային սեփականության իրավունքով պատկանող թիվ 87 հողատարածքը կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու միջոցով ներկայացրել են որպես Թ.Մեդրակյանի սեփականություն, որը 2003թ. փետրվարի 10-ին խաբեությամբ վաճառելով Անահիտ Հարությունյանին՝ խարդախությամբ հափշտակել են 4.000 ԱՄՆ դոլար:/.../

Վալերի Զաքարյանը, Ռ.Հարությունյանը և ամուսիններ Լ.Աբրահամյանն ու Թ.Մեդրակյանը, նախապես համաձայնության գալով միմյանց հետ, Երևանի Լալայանց փողոցի թիվ 47ա շենքի՝ Միքայել Հայրապետյանին պատկանող թիվ 39 բնակարանը կրկին անգամ վաճառելու նպատակով, կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու միջոցով ներկայացրել են որպես Թ.Մեդրակյանի և Լ.Աբրահամյանի համատեղ սեփականություն, որը 2003թ. փետրվարի 20-ին խաբեությամբ վաճառելով ամուսիններ Հասմիկ Գևորգյանին և Ռոլանդ Ավագյանին՝ խարդախությամբ հափշտակել են 13.000 ԱՄՆ դոլար:/.../

Շարունակելով իրենց հանցավոր գործունեությունը՝ Վալերի Զաքարյանը, ամուսիններ Լ.Աբրահամյանն ու Թ.Մեդրակյանը, նախապես համաձայնության գալով միմյանց հետ, Երևանի Լենինգրադյան փողոցի թիվ 18 շենքի՝ Լ.Աբրահամյանի հանգուցյալ հորը՝ Մարտիրոս Աբրահամյանին պատկանող թիվ 25 բնակարանը կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու միջոցով ներկայացրել են որպես Լ.Աբրահամյանի սեփականություն, որը 2003թ. մարտի 25-ին խաբեությամբ վաճառելով Բորիս Բաբաջանյանին՝ խարդախությամբ հափշտակել են 8.000 ԱՄՆ դոլար:/.../

Վալերի Զաքարյանը, Լ.Աբրահամյանն ու Թ.Մեդրակյանը, նախապես համաձայնության գալով միմյանց հետ, Երևանի Պուշկինի անվան փողոցի թիվ 48 շենքի՝ Արմենակ Գևորգյանին պատկանող թիվ 18 բնակարանը կեղծ փաստաթղթեր պատրաստելու և օգտագործելու միջոցով ներկայացրել են որպես Լևոն Աբրահամյանի սեփականություն, որը 2003թ. ապրիլի 23-ին խաբեությամբ վաճառելով Լևոն Ցիտողձյանին՝ խարդախությամբ հափշտակել են 28.500 ԱՄՆ դոլար:/.../

Վ.Զաքարյանը, Լ.Աբրահամյանն ու Թ.Մեդրակյանը, նախապես համաձայնության գալով միմյանց հետ, նույն՝ Երևանի Պուշկինի անվան փողոցի թիվ 48 շենքի՝ Արմենակ Գևորգյանին պատկանող թիվ18 բնակարանը երկրորդ անգամ խարդախությամբ վաճառելու նպատակով այն ներկայացրել են որպես Լևոն Աբրահամյանի սեփականություն, որը 30.000 ԱՄՆ դոլարով փորձել են վաճառել հայր և որդի Մարտին և Կարեն Մարգմանյաններին, ինչի կապակցությամբ 2003թ. ապրիլի 24-ին Լ.Աբրահամյանը և Թ.Մեդրակյանը Մ.Մարգմանյանից ու Կ.Մարգմանյանից վերցրել են 1.000 ԱՄՆ դոլար կանխավճար, սակայն իրենց մտադրությունն անկախ իրենց կամքից չեն կարողացել հասցնել մինչև վերջ, քանի որ վերջիններս, պարզելով, որ նշված բնակարանը իրենցից առաջ անշարժ գույքի առուվաճառքի գործակալության միջոցով վաճառել է այլ քաղաքացու, 25.04.2003թ. հրաժարվել են բնակարանը գնելուց ու Թամարա Մեդրակյանից պահանջել և հետ են ստացել նախորդ օրը տված կանխավճարը»:

Փաստորեն, դատապարտյալներն իրար հաջորդականությամբ 7 անգամ կատարել են խարդախություն՝ առաջին անգամ զգալի չափերի՝ հափշտակել են 3.000 ԱՄՆ դոլար, երկրորդ անգամ խոշոր չափերի՝ 8.000 ԱՄՆ դոլար, երրորդ անգամ զգալի չափերի՝ 4.000 ԱՄՆ դոլար, չորրորդ անգամ առանձնապես խոշոր չափերի՝ 13.000 ԱՄՆ դոլար, հինգերորդ անգամ խոշոր

չափերի՝ 8.000 ԱՄՆ դոլար, վեցերորդ անգամ առանձնապես խոշոր չափերի՝ 28.500 ԱՄՆ դոլար, յոթերորդ անգամ առանձնապես խոշոր չափերի՝ 30.000 ԱՄՆ դոլարի հափշտակության փորձ։

Կարծում ենք՝ նկարագրված փաստական հանգամանքների պայմաններում հանցագործությունների կրկնակիության և համակցության կանոնները ճիշտ չեն կիրառվել, ինչն էլ հանգեցրել է արարքի սխալ որակման։

Դատարանի կողմից թույլ տրված առաջին սխալը հանգում էր նրան, որ նա խախտել է հանցագործությունների կատարման հերթականությունը։ Կարծում ենք՝ կատարված հանցագործությունները պետք է արժանանային քրեաիրավական գնահատականի՝ ըստ կատարման հերթականության։ Եթե պահպանվեր հանցագործությունների կատարման հերթականությունը, ապա կատարվածը կստանար այլ քրեաիրավական գնահատական։

Երկրորդ սխալը կայանում է նրանում, որ դատարանը ճիշտ չի կիրառել քրեաիրավական նորմերի մրցակցության, կրկնակիության և համակցության կանոնները։

Քանի որ անձի կատարած առաջին խարդախությունը եղել է զգալի չափերի և խմբի կողմից, երկրորդը՝ խոշոր չափերի, խմբի կողմից և կրկին անգամ, երրորդը՝ զգալի չափերի, խմբի կողմից և կրկին անգամ, իսկ չորրորդը՝ առանձնապես խոշոր չափերի, ուստի դատարանն առաջին երեք խարդախությունը պետք է որակեր չորրորդից առանձին, քանի որ առաջին երեքում առկա է խմբի կողմից և կրկնակիության հատկանիշը, որը հոդվածի երկրորդ մասով է նախատեսված, ուստի ստացվում է, որ թեև առաջինի և երրորդի դեպքում խարդախության չափերը զգալի են, սակայն քանի որ դրանցում արդեն իսկ առկա է երկու ծանրացնող հանգամանք՝ խումբը և կրկնակիությունը, կատարվածը պետք է որակվեր հետևյալ կերպ՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով։

Քանի որ չորրորդ անգամ կատարվել է առանձնապես խոշոր չափերի, իսկ հինգերորդ անգամ խոշոր չափերի խարդախություն, որոնցից առանձնապես խոշոր չափը առավել ծանրացնող հանգամանք է, նախատեսված է հոդվածի 3-րդ մասում, քան խոշոր չափը, որը նախատեսված է երկրորդ մասում, ուստի դրանք չեն կարող միասին որակվել և յուրաքանչյուրը պետք է որակել ինքնուրույն։ Չորրորդը պետք է որակել որպես առանձնապես խոշոր չափերի խարդախություն՝ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ հինգերորդը՝ որպես խմբի կողմից կրկին անգամ կատարված խոշոր չափերի խարդախություն, այսինքն՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով։

Քանի որ վեցերորդ անգամ կատարվել է առանձնապես խոշոր չափերի խարդախություն, իսկ յոթերորդ անգամ առանձնապես խոշոր չափերի խարդախության փորձ, ուստի դրանք պետք է որակվեին միայն առանձնապես խոշոր չափը սահմանող մասով հղում կատարելով հանցափորձը սահմանող հոդվածի վրա, իսկ դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց կտրվի, որ կատարվել է մեկ ավարտված առանձնապես խոշոր չափերի խարդախություն և մեկ չավարտված առանձնապես խոշոր չափերի խարդախություն, այսինքն՝կատարվածը պետք է որակվեր հետևյալ կերպ՝ 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ։

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը, գալիս ենք այն եզրակացության, որ կատարված հանցագործություններին պետք է տրվեր հետևյալ քրեաիրավական գնահատականը՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետեր, 34-178- րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ։

Ինչևէ, նկատենք, որ վերոնշյալ և նմանատիպ այլ դեպքերին սխալ քրեաիրավական գնահատական տալուն բացի սուբյեկտիվ գործոնից առավելապես նպաստում են օրենսդրական անորոշությունները, բացերը և հակասությունները։

Խնդիրն այն է, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հանցագործության համար սույն օրենսգրքի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով, ինչը ենթադրում է, որ եթե անձը կատարում է միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու և ավելի հանցագործություններ, ուրեմն այն պետք է որակել համակցությամբ, սակայն օրենսդրական վերլուծությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր միևնույն

հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների կատարումն է, որ կարող է որակվել համակցությամբ, այլ բացառիկ դեպքերում։

1. Որոշ դեպքերում միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված արարքների կատարումը որակվում է համակցության կանոնով հանցակազմերը սխալ կառուցելու «շնորհիվ»:

Օրենսդրական վերլուծությունները ցույց են տալիս, որ երբ հոդվածը կառուցված է մի քանի մասերից, ապա տրամաբանությունն այն է, որ առաջին մասը սահմանում է հիմնական հանցակազմը, իսկ դրան հաջորդող մասերը, որպես կանոն, տվյալ հանցակազմի ծանրացնող հանգամանքները։ Սակայն այս տրամաբանությունը մի շարք հանցակազմեր կառուցելիս չի պահպանվել։

Այսպես, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում գողության համար։ Հիշյալ հոդվածը բաղկացած է չորս մասից.

«1. Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը, զգալի չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Գողությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,

4) կրկին անգամ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով։

3. Գողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա։

4. Տուժողի հագուստից, պայուսակից կամ ձեռքի այլ պահոցից կատարված մանր չափերով գողությունը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»։

Ինչպես երևում է հոդվածի վերլուծությունից, չորրորդ մասը թեև վերաբերում է գողությանը, սակայն որևէ առնչություն չունի հոդվածի առաջին երեք մասերի հետ, այլ կերպ՝ դրանք տարբեր հանցակազմեր են։ Հետևաբար ստացվում է, որ եթե անձը սկզբից կատարում է հոդվածի առաջին երեք մասերից որևէ մեկով նախատեսված հանցանք, իսկ հետո 4-րդ մասով նախատեսված հանցանք, ապա նրա կատարածը որակվում է համակցությամբ։ Այս նույն տրամաբանությամբ է որակվում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարումը, քանի որ 266-րդ հոդվածը նույնպես կառուցված է չորս մասերից և 4-րդ մասը որևէ առնչություն չունի հոդվածի առաջին երեք մասերի հետ։

Նշենք, որ հոդվածների այսպիսի կառուցվածքը քրեաիրավական նորմերի մրցակցության և կրկնակիության ինստիտուտի գոյության պայմաններում անտրամաբանական է։

2. Որոշ դեպքերում միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցանքները որակվում են համակցությամբ, այն պատճառով, որ հոդվածի կառուցվածքում կրկնակիության մասին կետ կամ մաս չկա։

Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում *«Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու»* համար.

1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է առողջության տևական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ՝

պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

3) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

4) շահադիտական դրդումներով,

5) առանձին դաժանությամբ,

6) խուլիգանական դրդումներով,

7) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Ինչպես երևում է հոդվածից, այն կառուցված է երկու մասից, իսկ կրկնակիության հատկանիշ հոդվածում չկա, ուստի, եթե անձը երկու անգամ կատարում է հիշյալ հանցագործությունը, որոնցից առաջինը՝ առաջին մասով նախատեսված, իսկ երկրորդը՝ երկրորդ մասով նախատեսված, ապա կատարվածը որակվում է համակցությամբ: Մինչդեռ, եթե հոդվածի երկրորդ մասն ունենար կրկնակիության մասին կետ, ապա, եթե անձը կատարեր սկզբից առաջին մասով նախատեսված արարք, իսկ հետո երկրորդ մասով, օրինակ՝ առանձին դաժանությամբ, ապա կատարվածը համակցությամբ չէր որակվի, այլ կորակվեր միայն հոդվածի երկրորդ մասի երկու կետերով՝ կրկնակիության հատկանիշով և առանձին դաժանությամբ[14]: Իսկ քանի որ կրկնակիությունը բացակայում է, ուստի կատարվածը պետք է որակվի համակցությամբ:

Հետաքրքիրն այն է, որ եթե հոդվածում լիներ կրկնակիության մասին կետ, ապա, եթե անձը երկու անգամ կատարեր առաջին մասով նախատեսված արարքը, ապա նրա կատարածը կորակվեր կրկնակիության հատկանիշով, իսկ ներկայիս կարգավորումների պայմաններում, կատարվածը պետք է որակվի միայն հոդվածի առաջին մասով, քանի որ կրկնակիություն չկա, իսկ համակցության համար պարտադիր է, որպեսզի անձի կատարած արարքները նախատեսված լինեն կամ տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածի տարբեր մասերով /այս հարցին դեռ կանդրադառնանք/:

3. Որոշ դեպքերում էլ միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցանքները համակցությամբ որակելն ուղղակիորեն կախված է հոդվածի կառուցվածքում կրկնակիության հատկանիշի զբաղեցրած «տեղից»:

Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում կողոպուտի համար: Հոդվածը բաղկացած է երեք մասից.

«1. Կողոպուտը՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Կողոպուտը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է խոշոր չափերով,

3) կատարվել է բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,

---

[14] Մեր կողմից որակման այս կանոնի կիրառումը պայմանավորված է տեսության և դատական պրակտիկայի կողմից մշակած, ինչպես նաև ՌԴ քրեական օրենսգրքի մինչև 2003 թվականի խմբագրությունը եղած կրկնակիության որակման կանոնով: Այսպես՝, ՌԴ քրեական օրենսգրքի մինչև 2003 թվականի խմբագրությունը դրանում նախատեսված էր հանցագործությունների կրկնակիությունը սահմանող 16-րդ հոդվածը, որի 3-րդ մասում սահմանված էր, որ այն դեպքերում, երբ սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կրկնակիությունը հանդես է գալիս, որպես առավել խիստ պատժի հանգեցնող հանգամանք, ապա անձի կողմից կատարված հանցագործությունները պետք է որակվեն կրկնակիության համար պատիժ սահմանող համապատասխան հոդվածի մասով:

4) զուգորդվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

5) կատարվել է կրկին անգամ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով։

3. Կողոպուտը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»։

Ինչպես երևում է հոդվածից, կրկնակիությունը՝ որպես որակյալ հատկանիշ, սահմանված է երկրորդ մասում, ուստի, եթե անձը երկու անգամ կատարում է կողոպուտ, որոնցից առաջինը՝ առաջին կամ երկրորդ մասով նախատեսված, իսկ երկրորդը՝ երրորդ մասով, ապա կատարվածը թեև ըստ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի իմաստով համարվում է նաև կրկին անգամ կատարված, սակայն որակվում է առանց այդ հատկանիշի, այլ միայն համակցությամբ։ Բանն այն է, որ եթե անձի կատարած հանցանքում միաժամանակ առկա է երկու ծանրացնող հանգամանք, ապա քրեաիրավական նորմերի մրցակցության ընդհանուր կանոնին համաձայն՝ առավել ծանրացնող հանգամանքն իր մեջ կլանում է նվազ ծանրացնող հանգամանքը[15], իսկ քանի որ անձի կատարած երկրորդ արարքում առկա է երկու ծանրացնող հանգամանք՝ «կրկնակիությունը» և «առանձնապես խոշոր չափը», որոնցից «առանձնապես խոշոր չափը» առավել ծանրացնող է, ապա առավել ծանրացնող հանգամանքն իր մեջ կլանելով նվազ ծանրացնող հանգամանքը, փաստորեն, կատարվածը կորակվի միայն համակցության կանոնով՝ առանց կրկնակիության հատկանիշի՝ 176-րդ հոդվածի 1-րդ մաս և 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ։

Այսինքն՝ ստացվում է, որ միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունները որակվում են համակցության կանոնով այն պատճառով, որ կրկնակիության հատկանիշը կլանվում է, ուստի ստացվում է, որ եթե հոդվածում կրկնակիությունը նախատեսված լիներ որպես առավել ծանրացնող հանգամանք, ապա այս դեպքում արարքը կորակվեր միայն կրկնակիության հատկանիշով՝ առանց համակցության։ Օրինակ, եթե անձը երկու անգամ կատարում է հոդվածի առաջին մասով նախատեսված կողոպուտ, ապա դա որակվում է կրկնակիության հատկանիշով, քանի որ կրկնակիությունը սահմանված է հոդվածի երկրորդ մասում։

Այստեղից էլ հետևում է, որ միևնույն հոդվածով նախատեսված հանցագործությունները համակցությամբ որակելն ուղղակիորեն պայմանավորված է հոդվածում կրկնակիության հատկանիշի առկայությունից կամ զբաղեցրած «տեղից», եթե կրկնակիությունն առավել ծանրացնող հանգամանք է, ապա կատարված հանցանքները որակվում են միայն կրկնակիության հատկանիշով՝ առանց համակցության, իսկ եթե կատարված հանցանքներից որևէ մեկը իր մեջ պարունակում է առավել ծանրացնող հանգամանք, քան կրկնակիության հատկանիշն է, ապա արարքը որակվում է համակցությամբ։

Փաստորեն, ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում ստացվում է, որ, օրինակ, երկու անգամ հասարակ կողոպուտ կատարելը համարվում է կրկին անգամ կատարված և որակվում է հոդվածի կրկնակիության հատկանիշով՝ 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ, իսկ երկու անգամ առանձնապես խոշոր չափերի կողոպուտը չի կարող որակվել կրկնակիության հատկանիշով, քանի որ նախ՝ կրկնակիության հատկանիշը նախատեսված է հոդվածի երկրորդ մասում և կլանվում է առանձնապես խոշոր չափի կողմից, ուստի հնարավոր չի լինում ցույց տալ կրկնակիության հատկանիշը[16], երկրորդ՝ հոդվածի երրորդ մասում կրկնակիությունը նախատեսված չէ, որպես որակյալ հատկանիշ։

---

[15] Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, 2003, էջ 313։

[16] Թվում է, թե բերած օրինակում առկա է հանցագործությունների համակցություն, քանի որ երկրորդ կողոպուտն իր մեջ պարունակում է միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հատկանիշներ՝

Ավելին, պետք է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա են մի շարք հանցատեսակներ, որոնց երկու և ավելի անգամ կատարելու դեպքում հանցագործությունների կրկնակիության և համակցության կանոնները ընդհանրապես կիրառելի չեն: Որպես այդպիսի հանցատեսակի օրինակ կարելի է ներկայացնել ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված *«տասնվեց տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու»* հանցակազմը:

Ողջ խնդիրը նրանում է, որ հիշյալ հոդվածը բաղկացած է մի մասից: Արարքը համակցությամբ որակելու համար, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի՝ պարտադիր է, որպեսզի կատարված հանցանքները նախատեսված լինեն կամ տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածի տարբեր մասերով, հետևաբար, եթե անձը երկու և ավելի անգամ կատարում է այնպիսի հոդվածով նախատեսված հանցանք, որը բաղկացած է մի մասից, ինչպիսին է նաև քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածը, ապա համակցությունը բացակայում է, և անձը ենթարկվում է պատասխանատվության միայն հիմնական հանցակազմը նախատեսող հոդվածով, առանց որևէ ծանրացնող հանգամանքի:

Այս առումով որոշակի առանձնահատկություն ունի կրկնակիության ինստիտուտը:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի՝ կրկնակիությունն առկա է, եթե անձը երկու և ավելի անգամ կատարել է միևնույն հոդվածով կամ միևնույն հոդվածի մասով նախատեսված հանցանքներ: Եթե ելնենք այս բնորոշումից, ապա անձի կողմից երկու և ավելի անգամ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարումը համարվում է կրկին անգամ կատարված: Սակայն այստեղ հարց է ծագում. ***ինչպես որակել կատարված արարքները, որպեսզի ցույց տրվի նաև կրկնակիության հատկանիշը***:

ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի նորմերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև օրենքում սահմանված է, որ կրկնակիությունը առկա է, եթե անձը երկու և ավելի անգամ կատարել է միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված հանցանք, սակայն կատարվածը կարող է որակվել կրկնակիության հատկանիշով, եթե հատուկ մասի համապատասխան հոդվածում կրկնակիությունը հատուկ նշված է՝ որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ: Խնդիրն այն է, որ նախ՝ օրենսդրական այնպիսի կարգավորում չկա, որպեսզի հատուկ մասում հատուկ նշված չլինելու դեպքում հնարավոր լիներ կատարված հանցանքները որակել կրկնակիության հատկանիշով, երկրորդ՝ եթե առանց հատուկ մասում հատուկ նշված լինելու հնարավոր լիներ արարքները որակել կրկնակիության հատկանիշով, ապա անիմաստ է դառնում այն, որ քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք հոդվածներում կրկնակիությունը սահմանված է որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, իսկ մյուսներում՝ ոչ:

Այսինքն՝ եթե ելնենք ընդհանուր մասի տրամաբանությունից, ապա քրեական օրենսգրքի հատուկ մասի ցանկացած հոդվածով նախատեսված հանցանք երկու և ավելի անգամ կատարելը համարվում է կրկնակի, իսկ հատուկ մասի տրամաբանությունն էլ այն է, որ հանցանքը կարող է որակվել կրկնակիության հատկանիշով միայն այն ժամանակ, երբ Հատուկ մասի համապատասխան հոդվածում կրկնակիությունը՝ որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, հատուկ նշված է[17]:

կրկնակիությունը՝ 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ և առանձնապես խոշոր չափը՝ 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ: Սակայն, քանի որ կրկնակիությունը կլանվում է առանձնապես խոշոր չափի կողմից, հետևաբար, ստացվում է, որ անձի կատարած երկրորդ արարքում առկա է միայն 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշը, իսկ որպեսզի կատարված երկու հանցանքները որակվեն համակցության կանոնով պարտադիր է, որպեսզի կատարված հանցանքները նախատեսված լինեն կամ տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածի տարբեր մասերով, ուստի կատարվածը չի կարող որակվել նաև համակցության կանոնով:

[17] Հետաքրքիրն այն է, որ քրեական օրենսգրքում կապված կրկնակիության հետ առկա է նաև մեկ այլ թերություն: Ինչպես նշեցինք հանցանքը կարող է որակվել կրկնակիության կանոնով /հատկանիշով/, եթե հատուկ մասի համապատասխան հոդվածում այն նշված է որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, քանի որ այլ կերպ հնարավոր չէ արարքը որակել կրկնակիության հատկանիշով:

Քանի որ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածը բաղկացած է մի մասից, կրկնակիությունը չի նշվում որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, հետևաբար 141-րդ հոդվածով նախատեսված հանցանքը երկու և ավելի անգամ կատարելը չի կարող որակվել կրկնակիության հատկանիշով: Ստացվում է այնպես, որ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված արարքի մի անգամ կատարողն էլ, մի քանի անգամ կատարողն էլ ենթարկվում են պատասխանատվության քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով՝ առանց որևէ որակյալ հատկանիշի: Ընդ որում, չի բացառվում, որ եթե տարբեր դատարաններ քննեն հիշյալ գործերը, ապա մի անգամ կատարողի և երկու անգամ կատարողի նկատմամբ նշանակվի նույն պատիժը նույն պատժաչափով[18]: Կարևոր է նկատել, որ տեսության մեջ նշվում է, որ այն դեպքում, երբ հոդվածը ունի կրկնակիության հատկանիշը սահմանող կետ կամ մաս, ապա այդ հոդվածով կատարված երկու և ավելի հանցագործությունները պետք է որակվեն այդ հոդվածի կրկնակիության հատկանիշով, իսկ եթե հոդվածը չունի կրկնակիության հատկանիշով կետ կամ մաս, ապա կատարված արարքները պետք է դիտել որպես միասնական հանցագործության դրվագներ: Օրինակ, եթե անձը կատարում է երկու հասարակ գողություն, ապա դրանք որակվում են միայն կրկնակիության կանոնով, իսկ եթե անձը տարբեր ժամանակահատվածներում երկու անգամ կատարում է «անզգուշությամբ մահ պատճառել», ապա այս արարքները պետք է որակվեն միայն այդ հոդվածով որպես միասնական հանցագործության ինքնուրույն դրվագներ: Ըստ հեղինակի՝ այսպիսի որակումը հիմնավորվում է նրանով, որ օրենքը արգելում է միևնույն հոդվածով նախատեսված արարքները համակցությամբ որակելը[19]: Կարծում ենք՝ թեև ասվածը ուղղակի լուծում է օրենսդրական ներկայիս կարգավորումների պայմաններում, քանի որ այլ տարբերակ հնարավոր չէ[20], սակայն անտրամաբանական է:

Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ ընդհանուր մասում կրկնակիությունը այդ տրամաբանությամբ չէ սահմանված: Բանն այն է, որ Հատուկ մասում նշված լինելու տրամաբանությամբ արարքը կրկնակիության հատկանիշով որակելու նպատակով պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն սահմանված է, որ տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Այստեղ հարց է ծագում. եթե արարքը կրկնակիության հատկանիշով որակելու համար պարտադիր է, որպեսզի հատուկ մասի համապատասխան հոդվածում կրկնակիությունը սահմանված լինի որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասում ինչու է նշվում միայն տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունների մասին. *չէ, որ այս կանոնը կիրառելի է կրկնակիության բոլոր դեպքերի վրա:* Նկատենք, որ պատասխանը մեկն է. օրենսդիրը անհետևողականություն է դրսևորել կրկնակիության ինստիտուտը կանոնակարգելիս: Խնդիրը նրանում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածը ունի ներքին հակասություն: Փաստորեն, մի դեպքում՝ 21-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է կրկնակիության՝ որպես բազմակիության տեսակի մասին, իսկ մյուս դեպքում՝ 21-րդ հոդվածի 3-րդ մասում կրկնակիության որպես հանցակազմի հատկանիշի մասին:

[18] Հանգամանք, որը վկայում է այն մասին, որ կասկածի տակ է դրվում ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև 6-րդ հոդվածում ամրագրված օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքները:

[19] Êóäðÿâöåâ Â. Í. Îáùàÿ òåîðèÿ êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé, Ì.,2006, ñ. 267.

[20]Հանցանքը կարող էր որակվել կրկնակիության հատկանիշով, եթե հատուկ մասից բացառվեր կրկնակիության հատկանիշը, իսկ ընդհանուր մասում՝ կրկնակիությունը սահմանող հոդվածում նշվեր, որ արարքում կրկնակիության հատկանիշը ցույց տալու համար հղում է կատարվում ընդհանուր մասի կրկնակիությունը սահմանող հոդվածի վրա, ինչպես դա արվում է հանցագործության նախապատրաստության և հանցափորձի դեպքում, օրինակ՝ 141-րդ և 21-141-րդ հոդվածներ: Այլ կերպ ասած, եթե օրենքում նշված լիներ, որ կրկնակիության հատկանիշով արարքը որակելիս հատուկ մասի համապատասխան հոդվածի հետ մեկտեղ հղում է կատարվում ընդհանուր մասի կրկնակիությունը սահմանող հոդվածի վրա, ապա հարցը կհամարվեր լուծված, և վերևում թվարկված բոլոր հիմնախնդիրները կստանային իրենց լուծումը, սակայն այստեղ այլ հարցեր են առաջանում: Խնդիրն այն է, որ նման պայմաններում կրկնակիությունը կիմաստազրկվի, որովհետև ռեպրեսիայի հարցը չի լուծի, քանի որ յուրաքանչյուր դեպքում ռեպրեսիան կապահովվի համակցության շնորհիվ, ուստի առավել տրամաբանական կլինի կրկնակիությունը ընդհանրապես բացառել քրեական օրենսգրքից, իսկ

Ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում, փաստորեն, հակասություն է առաջանում ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի կրկնակիությունը սահմանող նորմերի միջև, քանի որ ընդհանուր մասում սահմանված հասկացությունից հետևում է, որ կրկնակիությունը առանց որևէ բացառության տարածվում է բոլոր հանցակազմերի վրա, անկախ այն բանից, թե կրկնակիությունը՝ որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, նախատեսված է, թե ոչ (բացառությամբ տարաբնույթ հանցագործությունների, որոնց համար օրենքը պարտադիր է համարում հատուկ մասում նախատեսված լինելը), իսկ հատուկ մասի տրամաբանությամբ կրկնակիությունն առավել նեղ է՝ կատարված հանցանքները կարող են որակվել կրկնակիության հատկանիշով, եթե այն որպես տվյալ հանցակազմի հատկանիշ նախատեսված է հոդվածում:

Այսինքն՝ ընդհանուր մասում կրկնակիությունը սահմանվում է որպես հանցագործությունների բազմակիության ինքնուրույն տեսակ, իսկ հատուկ մասում՝ որպես հանցակազմի հատկանիշ:

Կարևորենք նաև այն, որ ընդհանուր մասում սահմանված կրկնակիության և համակցության ինստիտուտները համաչափորեն լրացնում են միմյանց, քանի որ, եթե անձի կատարած հանցանքները նախատեսված են միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով, ապա դա որակվում է կրկնակիության հատկանիշով, իսկ եթե տարբեր հոդվածներով են, կամ հոդվածի տարբեր մասերով, ապա համակցության կանոնով: Մինչդեռ, հիշյալ համաչափությունը հատուկ մասի կրկնակիության ինստիտուտի «շնորհիվ» խախտվում է՝ ինչի մասին խոսեցինք վերևում:

Քննարկելով կրկնակիության և համակցության հարաբերակցության հարցը, նշենք, որ թեև օրենքում ուղղակիորեն սահմանված է, որ հանցանքները որակվում է համակցությամբ, եթե նախատեսված են կամ տարբեր հոդվածներով, կամ միևնույն հոդվածի տարբեր մասերով, սակայն դատական պրակտիկայում հաճախ հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ անտեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածը և միևնույն հոդվածով նախատեսված հանցագործությունների մի քանի անգամ կատարումը, որն ուղղակիորեն առաջացնում է կրկնակիություն, միաժամանակ որակում են նաև համակցության կանոնով:

Այսպես, օրինակ, Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. հոկտեմբերի 29-ի դատավճռով Ա-ն դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, այսինքն՝ զգալի չափերի գողության, կրկին անգամ կատարված գողություն և կրկին անգամ կատարված խարդախության համար:

Ա-ին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա 2006թ. հունվարի սկզբներին՝ ժամը 18.00-ի սահմաններում, Մաշտոցի պողոտայի 18 հասցեում գործող «ՍԱՍ գրուպ» ՍՊԸ-ին պատկանող սուպերմարկետի ալկոհոլային խմիչքների վաճառասրահից գողացել է զգալի չափի՝ 22.800 ՀՀ դրամ արժողության 0.5մլ տարողության մեկ շիշ «Նաիրի» տեսակի կոնյակ: Բացի այդ Ա-ն կրկին անգամ, 2006թ. հուլիսի վերջերին՝ ժամը 14-ի սահմաններում, «ԱՆԻ 87» ՍՊԸ-ին պատկանող Բագրատունյաց 25/27 հասցեում գտնվող «ՋԻՈ» սուպերմարկետի ալկոհոլային խմիչքների վաճառասրահից գողացել է զգալի չափի՝ 300.000 ՀՀ դրամ արժողության 1 շիշ «Պարույր Սևակ» տեսակի կոնյակ: Դրանից հետո Ա-ն կրկին անգամ 2006թ. սեպտեմբերի 20-ին ժամը 21.00-ից մինչև 21.30-ն ընկած ժամանակահատվածում, Նոր-Նորքի 7-րդ զանգվածում գործող «Ունիվերսամ ԱՐՍ» ՍՊԸ-ին պատկանող «777» սուպերմարկետի ալկոհոլային խմիչքների վաճառասրահից գողացել է զգալի չափի՝ 300.000 ՀՀ դրամ արժողության 1 շիշ «Պարույր Սևակ» տեսակի կոնյակ: Բացի այդ Ա-ն կրկին անգամ 2007թ. փետրվարի 12-ին իր կողմից վարձակալված՝ Կոմիտաս 1 շենքի թիվ 104 բնակարանում ժամը 20.00-ի սահմաններում նշված բնակարան հյուրընկալված Նաիրա Տեր-Կարապետյանի պայուսակից գողացել է վերջինիս պատկանող 8.000 ՀՀ դրամ արժողության դրամապանակը՝ 10.000 ՀՀ դրամ կանխիկ գումարի պարունակությամբ, այնուհետև կրկին անգամ գույքի հափշտակության նպատակով, նույն բնակարանում չարաշահելով Ն.Տեր-Կարապետյանի

դրա փոխարեն համակցության հասկացության մեջ նշվի, որ համակցություն են առաջացնում ինչպես տարբեր հոդվածներով, այնպես էլ միևնույն հոդվածով նախատեսված հանցանքների կատարումը:

վստահությունը, զանգահարելու պատրվակով վերջինիցս վերցրել է «Սամսունգ E-530» մոդելի բջջային հեռախոսը, դուրս է եկել բնակարանից՝ խաբեությամբ հափշտակելով Ն.Տեր-Կարապետյանի 52.000 ՀՀ դրամ արժողության «Սամսունգ E-530» մոդելի բջջային հեռախոսը:

Կարծում ենք՝ կրկնակիության և համակցության ինստիտուտների գոյության պայմաններում դատարանը սխալ քրեաիրավական գնահատական է տվել Ա-ի կատարած արարքներին՝ դատարանը չպետք է գողությունը երկու անգամ ցույց տար: Դատարանը կատարվածը պետք է որակեր որպես կրկին անգամ կատարված գողություն և կրկին անգամ կատարված խարդախություն, այսինքն՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ[21]:

Նկատենք, որ տեսության մեջ նույնպես որոշ հեղինակներ նշում են, որ կրկնակիություն առաջացնող հանցագործություններից առաջինը պետք է որակել ինքնուրույն, իսկ դրան հաջորդողները որպես կրկին անգամ կատարված: Տ.Է. Կառանն իր դիրքորոշումը հիմնավորելու համար համեմատական է անցկացնում ավարտված և չավարտված հանցագործությունների որակման կանոնների հետ և նշում. «որքանով, եթե կատարված արարքներից առաջինը ավարտված է, իսկ երկրորդը չավարտված, օրինակ, եթե անձը կատարում է գողություն, հետո՝ գողության փորձ, ապա արարքները այս դեպքում պետք է որակվեն կրկնակիության և համակցության կանոնով, քանի որ քրեական պատասխանատվության հիմքերի տեսանկյունից ավարտված և չավարտված հանցագործությունների հանցակազմերը տարբեր են, այդքանով էլ անտրամաբանական կլինի, եթե միաբնույթ երկու ավատրվածի դեպքում արարքները որակվեն միայն կրկնակիության կանոնով, քանի որ անձը երկու ավարտվածի համար ավելի մեղմ է պատժվում, քան մեկ ավատրվածի և մեկ չավարտվածի համար[22]: Այստեղից էլ հեղինակը հետևություն է անում, որ կրկնակիությունը պետք է որակվի երկու հոդվածներով:

Որոշ պրակտիկ իրավաբաններ նույնպես գտնում են, որ կրկնակիության դեպքում կատարվածը պետք է որակել և համակցությամբ և կրկնակիությամբ: Սակայն նրանք այդպիսի որակման համար հիմք են ընդունում ոչ թե ավարտված և չավարտված հանցագործությունների որակման կանոնները, քանի որ նրանց կարծիքով, թե ավարտված, թե չավարտված հանցագործությունների դեպքում կատարվածը պետք է որակել՝ մեկ հոդվածով հղում կատարելով ընդհանուր մասի համապատասխան հոդվածի վրա, այլ տարբեր հոդվածներով նախատեսված կրկնակիություն առաջացնող հանցագործությունների որակման կանոնները: Բանն այն է, որ ինչպես նշեցինք վերևում տարբեր հոդվածներով նախատեսված կրկնակիություն առաջացնող հանցագործությունները որակվում են և՛ համակցությամբ, և՛ կրկնակիությամբ, ուստի ըստ նրանց՝ անտրամաբանական է, որ միևնույն հոդվածով նախատեսված հանցագործությունները որակվեն մեկ հոդվածով, իսկ տարբեր հոդվածներով նախատեսված կրկնակիություն առաջացնող հանցագործությունները երկու հոդվածով, օրինակ՝ գողության և կողոպուտի դեպքում, քանի որ անտրամաբանական է, որպեսզի գողության և կողոպուտի դեպքում անձը ենթարկվում է պատասխանատվության երկու հոդվածով, իսկ երկու և ավելի գողության դեպքում մեկ հոդվածով:

Լ.Ինոգամովա-Խեգայը նույնպես նշում է, որ անտրամաբանական է, որ անձը ***երկու միասեռ հանցագործության /ընդգծումը մերն է/,*** կամ մեկ ավարտված և մեկ չավարտված հանցագործության համար ավելի խիստ է պատժվում քան այն անձը, ով կատարել է, օրինակ, 4 ավարտված միաբնույթ

---

[21] Վ.Պ. Մալկովը գրում է՝ կատարվածը կրկնակիության հատկանիշով որակել նշանակում է, որ անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության միաժամանակ մի քանի միանման հանցագործությունների համար, կամ մի արարքի համար, սակայն որը կատարվել է կրկին անգամ: Այսպիսով, արարքի կրկնակիության հատկանիշով որակումն իր մեջ ընդգրկում է առաջին և դրան հաջորդող բոլոր միանման արարքները: Դրա համար, ըստ հեղինակի, իմաստ չունի առաջին արարքը հատուկ արտացոլելը, քանի որ անհրաժեշտություն չկա արտացոլել նաև դրան հաջորդող հանցագործությունները //տե՛ս Ìàëêîâ Â.Ï. Ìíîæåñòâåííîñòü ïðåñòóïëåíèé è åå ôîðìû ïî ñîâåòñêîìó óãîëîâíîìó ïðàâó Êàçàíü, 1982. ñ.82.

[22] Տե՛ս Êàðàâà Ò.Ý. Ïîâòîðíîñòü ïðåñòóïëåíèé. Ì., 1983, ñ. 52-53.

հանցագործություններ, քանի որ, այս դեպքում խախտվում է արդարության սկզբունքը[23], որն արտահայտվում է նրանում, որ պատիժ նշանակելիս դատարանը առաջին դեպքում պետք է ղեկավարվի համակցության կանոնով և նշանակած պատիժները լրիվ կամ մասնակի գումարի, ինչի արդյունքում կարող է առավել խիստ պատիժ նշանակվել, իսկ երկրորդի դեպքում դատարանը սահմանափակվում է համապատասխան հոդվածի սանկցիայի առավելագույն սահմանով, սակայն հեղինակը գտնում է, որ թե ավարտված, թե չավարտված հանցագործությունների դեպքում պետք է կիրառել ոչ թե համակցության կանոնը, այլ կրկնակիության կանոնը: Բանն այն է, որ ըստ նրա, այս դեպքում կարող է առկա լինել կրկին դատապարտվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում: Կրկին դատապարտվելու անթույլատրելիության սկզբունքի խախտումը արտահայտվում է նրանում, որ եթե անձը երկու անգամ կատարում է հասարակ գողություն, ապա նրա արարքը պետք է որակվի որպես կրկին անգամ կատարված, այսինքն՝ հոդվածի առավել ծանրացնող մասով, իսկ եթե սրա հետ մեկտեղ առաջին գողությունը որակվի նաև ինքնուրույն, ապա կստացվի, որ անձի կատարած առաջին գողությունը երկու անգամ արժանանում է քրեաիրավական գնահատականի՝ առաջին անգամ ինքնուրույն, իսկ երկրորդ անգամ որպես կրկին անգամ կատարված: Իսկ քանի որ միևնույն արարքի համար կրկին դատվելը անթույլատրելի է, ուստի հեղինակը գտնում է, որ կատարվածը պետք է որակվի միայն կրկնակիության կանոնով, առանց համակցության[24]:

Այն որ, թե ավարտված, թե չավարտված հանցագործությունները պետք է որակվեն մի հոդվածով բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածից, որի 3-րդ մասի համաձայն՝ հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար պատասխանատվությունը վրա է հասնում սույն օրենսգրքի Հատուկ մասի նույն հոդվածով, ինչ ավարտված հանցագործության համար՝ հղում կատարելով սույն օրենսգրքի 34-րդ կամ 35-րդ հոդվածին: Եթե այս կանոնը կիրառենք, ապա կստացվի հետևյալ կերպ, օրինակ, եթե անձը կատարում է գողություն հետո գողության փորձ, կամ հակառակը, ապա կատարվածը կորակվի հետևյալ կերպ՝ 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ, իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե կատարված երկու հանցագործություններից առաջինն է ավարտվել նախապատրաստության կամ հանցափորձի փուլում, թե երկրորդը, ապա դա ցույց կտրվի դատավճռի նկարագրական-պատաճառաբանական մասում:

Ինչևէ, համաձայնելով այն հեղինակների հետ, որ միևնույն հոդվածով նախատեսված կրկնակիություն առաջացնող հանցագործությունները պետք է որակել բացառապես համապատասխան հոդվածի կրկնակիության հատկանիշով՝ առանց համակցության, ինչը վերաբերում է նաև ավարտված և չավարտված հանցագործություններին, քանի որ հակառակ դեպքում խախտվում է կրկին դատապարտվելու անթույլատրելիության սկզբունքը, նշենք, որ արարքների որակման հիշյալ կանոնը լուծելով՝ մի խնդիր կառաջացնի մեկ այլ, ոչ պակաս կարևոր, խնդիր:

Նախ՝ առաջարկված կանոնը, թեև բացառում է միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված հանցագործությունների կատարման դեպքում կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտումը, սակայն չի բացառում այդ սկզբունքի խախտումը այն դեպքերում, երբ անձը կատարում է տարբեր հոդվածներով նախատեսված կրկնակիություն առաջացնող հանցագործություններ: Բանն այն է, որ տարբեր հոդվածներով նախատեսված կրկնակիություն առաջացնող հանցագործությունների դեպքում կատարվածը որակվում է ինչպես կրկնակիության, այնպես էլ համակցության կանոնով, ինչի արդյունքում անձի կատարած երկու արարքներից առաջինն երկու անգամ գնահատվում է՝ առաջին անգամ ինքնուրույն, իսկ երկրորդ անգամ որպես կրկին անգամ կատարված:

---

[23] Տե՛ս Ëþäìèëà È í î ãàì î âà-Õåãàé, Í åî äí î êðàò í î ñò ü è êî íêóðåíöèÿ í î ðì: íåêî òîðûå ñïîðíûå âî ïðîñû êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé è íàçíà÷åíèÿ íàêàçàíèÿ //Óãîëîâí î å ïðàâî, 2/2002, ñ.32.

[24] Տե՛ս Ëþäìèëà È í î ãàì î âà-Õåãàé, Í åî äí î êðàò í î ñò ü è êî íêóðåíöèÿ í î ðì: íåêî òîðûå ñïîðíûå âî ïðîñû êâàëèôèêàöèè ïðåñòóïëåíèé è íàçíà÷åíèÿ íàêàçàíèÿ //Óãîëîâí î å ïðàâî, 2/2002, ñ.32.

Երկրորդ՝ կրկնակիությունը չի կարող ապահովել այն խնդրի իրականացումը, ինչի համար այն «ստեղծված է»: Խոսելով հանցագործությունների բազմակիության կողմից լուծման ենթակա խնդիրների մասին՝ տեսության մեջ նշվում է, քանի որ բազմակիությունը ցույց է տալիս ինչպես հանցագործությունների, այնպես էլ դրանք կատարող անձի հանրային բարձր վտանգավորությունը, ուստի այդպիսի հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ռեպրեսիայի խստացումով[25], մինչդեռ, առաջարկված կանոնը ցույց է տալիս, որ կապ չունի, թե անձը, օրինակ, երկու անգամ է գողություն կատարել, թե տաս, միևնույն է նրա արարքը պետք է որակվի միայն կրկնակիության հատկանիշով՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ, եթե անգամ ընդունենք այն մոտեցումը, որ կրկնակիության դեպքում կատարվածը պետք է որակել ինչպես կրկնակիության, այնպես էլ համակցության կանոնով, ապա միևնույն է կրկնակիությունը չի կարող լուծել իր առջև դրված խնդիրները:

Բանն այն է, որ եթե անձը 10 անգամ կատարել է գողություն, ապա միևնույն է նրա կատարած 10 հանցագործությունները հնարավոր չի լինում քրեաիրավական որակման մեջ արտացոլել, քանի որ, եթե առաջինը որակենք ինքնուրույն, միևնույն է մնացած ինը կլանվում են կրկնակիության հատկանիշի կողմից[26], մինչդեռ, եթե անձը, օրինակ, 10 անգամ տարբեր հաջորդականությամբ կատարեր՝ գողություն, կողոպուտ, խարդախություն, ավազակություն և այլն, ապա կատարված յուրաքանչյուր հանցագործություն պետք է որակել համակցության և միաժամանակ կրկնակիության կանոնով, քանի որ քրեական պատասխանատվության հիմքերի տեսանկյունից դրանք տարբեր հանցակազմեր են: Հետևաբար ստացվում է, որ տարբեր հոդվածներով նախատեսված հանցանքների կատարման դեպքում ռեպրեսիան ապահովվում է, քանի որ կատարվածը որակվում է համակցությամբ, հետևաբար և պատիժը նշանակվում է համակցության կանոնով՝ լրիվ կամ մասնակի գումարման սկզբունքով, իսկ միևնույն հոդվածով նախատեսված հանցանքների դեպքում՝ ոչ, քանի որ այս դեպքում պատիժը նշանակվում է հոդվածի սանկցիայի շրջանակում: Մինչդեռ, կրիմինոլոգիայում համընդհանուր ճանաչում է ստացել այն մոտեցումը, որ միևնույն հանցանքի պարբերաբար կատարումը ցույց է տալիս այն կատարող անձի առավել մեծ հանրային վտանգավորության մասին, քան այն անձի, ով կատարում է տարբեր հանցագործություններ, քանի որ առաջինը մասնագիտանում է կոնկրետ տեսակի հանցանքի կատարման մեջ, նրա մոտ ձևավորվում են կայուն կրիմինոգեն հակումներ[27]:

Հետևաբար ոչնչով արդարացված չէ այն իրավիճակը, որ կրկնակիության դեպքում անձն առավել մեղմ է պատժվում, քան համակցության դեպքում, հանգամանք, որը կասկածի տակ է դնում ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի գոյությունը:

Կարծում ենք՝ քրեական պատասխանատվության տարբերակումը միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված հանցագործությունների դեպքում, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել, պետք կառուցվի այն նույն տրամաբանությամբ, ինչ տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունների դեպքում, այլ կերպ՝ քրեական պատասխանատվության տարբերակումը երկու գողության կամ կողոպուտի դեպքում պետք է հիմնվի նույն տրամաբանության վրա, ինչ, օրինակ, կողոպուտի և առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու դեպքում[28]: Իսկ սա հնարավոր է ապահովել միայն երկու և ավելի

---

[25] Ôåäîð Áðàæíèê. Ìíîæåñòâåííîñòü ïðåñòóïëåíèé- îòðàæåíèå èõ ñîâîêóïíîé îáùåñòâåííîé îïàñíîñòè. //Уголовное право, 3/2000, с.7. Âладислав Щепельков Проблемы конструирования института множественности преступлений //Уголовное право, 1/2001, с.43.

[26] Ավելին, այս դեպքում կստացվի, որ անձի կատարած առաջին արարքը հաջորդ ինների հետ արժանանում է գնահատականի, ինչի արդյունքում խախտվում է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը:

[27] Ôåäîð Áðàæíèê. Ìíîæåñòâåííîñòü ïðåñòóïëåíèé- îòðàæåíèå èõ ñîâîêóïíîé îáùåñòâåííîé îïàñíîñòè. //Уголовное право, 3/2000, с.7. Âладислав Щепельков Проблемы конструирования института множественности преступлений //Уголовное право, 1/2001, с.43.

[28] Վլադիսլավ Շեպելկովը նշում է՝ ռեպրեսիայի խստացումը տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցանքների դեպքում ի տարբերություն միևնույն

հանցագործություններին քրեաիրավական գնահատական տալու հարցում օրենսդրական հիմնարար փոփոխություններ մտցնելու ճանապարհով:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարծում ենք՝ նպատակահարմար է հրաժարվել կրկնակիության ինստիտուտից, որն ինչպես նշեցինք՝

1. օբյեկտիվորեն չի կարող ապահովել հանցագործությունների բազմակիության գործառույթների իրականացումը.

2. խախտում է կրկին դատապարտվելու անթույլատրելիության սկզբունքը.

3. խախտում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը.

4. կասկածի տակ է դնում իրավական որոշակիության սկզբունքը:

Կրկնակիության ինստիտուտից հրաժարվելու դեպքում անհրաժեշտ է փոփոխության ենթարկել նաև համակցության ինստիտուտը, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածում համակցությունը պետք է բնորոշել հետևյալ կերպ.

«Հանցագործությունների համակցություն է համարվում միևնույն անձի կողմից երկու և ավելի հանցագործությունների կատարումը, որոնցից ոչ մեկի համար նա դատապարված չի եղել»:

Արդյունքում երկու և ավելի հանցագործությունների կատարումը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել, կորակվի համակցության կանոնով, անկախ այն բանից, թե կատարվածը նախատեսված է միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով, թե տարբեր հոդվածներով: Իսկ դատվածության դեպքում անձի կատարած երկրորդ հանցագործությունը կորակվի ըստ փաստացի կատարվածի, իսկ դատվածությունը հաշվի կառնվի պատիժ նշանակելիս որպես ռեցիդիվ:

հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված հանցագործությունների ոչնչով արդարացված չէ: Ավելին, քանի որ տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունները հաճախ կատարվում են մի արարքով, հետևաբար ընդհանրապես արդարացված չէ, որպեսզի այդ հանցագործությունների դեպքում ռեպրեսիան խստացվի այն պատճառով, որ այդ հանցագործությունները ոտնձգում են տարբեր օբյեկտների դեմ //Владислав Щепельков Проблемы конструирования института множественности преступлений //Уголовное право, 1/2001, с.43.